

1897

1897

ԲԱՏԱՆՈՐ ԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պոչտային համար
 Տարեկան 10 Ձր.
 Վեցամսեայ 5 »
 Արտասահմանի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 ԿԱՆԻՍԻՅ ՎՃԱՐՆԵԼԻ
 —)(—
 Գրութիւնք եւ չեւեռութիւն
 —)(—
 Ծանուցում յոյր 20 սակ-
 քիւն հ. երեքին աւելի սակ-
 քաներու համար 20 Օլօ
 գեղջ կրնայ:

ՇՄԱՍԹ

Կանակ եւ պոստի գրութիւն
 Խմբագրութեան հասցիին

Redaction du journal
 «Charjoun»
 Varna (Bulgarie).

Meckit's avo-tangars 11.4
Premier (Mestral)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇՄԱՍԹ-ՓՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ.
 АДВОКАТЪ

ԽԵՐ ԶԿԱՅ

—)(—

Ստորեւ կը հրատարակենք Ֆոքլանդէն զրկուած թղթակցութիւն մը, որուն հեղինակը կը գանգատի Ռուսմանիոյ հայ քահանաներուն անգործութեան և կամապարզին գործունէութեան վրայ, և աւելորդ չի սեպեր խնդրելու քահանայական դասէն որ քիչ մը աւելի լըջօրէն վերաբերուի գէպի հայ ազգային գործերը:

Ասկէց առաջ ըսած ենք և հիմակ ալ կը կրկնենք թէ ընդհանրապէս եկեղեցականներէն խեր չկայ: Փորձերով համոզուած ենք այս բանին. ուստի բոլորովին աւելորդ է ամէն առթիւ կոչ ընել անոնց ազգային զգացումներուն:

Մնաց որ, մենք, արտասահմանի հայերս, բնաւ պէտք չունինք անոնց աշակցութեան մեր ազգային կեանքը զարգացնելու. և կամ այնքան չնչին աշակցութիւն մըն է, որ կրնանք առանց անոր ալ խնդիրը չկորսուած համարիլ և ըստ այնմ աշխատիլ:

Կերակարաններէն խեր չկայ. եթէ իրենց կրօնական պարտքերուն մէջ անթերի գտնուին ու գայթակղութիւններու տեղի չտան՝ ատիկայ կը բաւէ, և նոյն իսկ շատ բան է:

Ինքզինքնիս, ի սէր աստուծոյ, կղերականութեան չստորագասնք, անոր գանդաղ և շահախնդիր նկարագրէն չառկախ ենք մեր ազգային գոյութեան խնդիրը:

Ազգային ճակատագիրը վարելու գործը պէտք է երիտասարդ, անձնուէր և աննկուն ձեռքերու մէջ ամփոփուի. և ան հրամայէ նոյն իսկ եկեղեցիի պաշտօնէութեան:

Ռուսմանիոյ մէջ, թէեւ վտրարթիւ բայց սակայն ընտրեալ, հմուտ և ազգային ոգիով լեցուած երիտասարդներ ունինք. ինչո՞ւ անգործ կը մնան, սպասելով որ տէր հայր մը զիրենք առաջնորդէ խաչով ու մոմերով. ու՞ր պիտի երթանք, հարսնիք թէ գերեզման. ու՞ր տեսնուած

է որ կերտը և խունկը գէպի առաջգիմութիւն տանին աշխարհ մը:

Այդ երիտասարդները, եթէ իրենց ճիգերը միացնեն իրենց տարէց սերունդին ջանքերուն, որոնց մէջ ազգին օգուտը խորհոյներ տասնեակներով կը համբուրին, կրնան հրաշքներ գործել, այնպիսի հրաշքներ որոնք երբեք չեն կրնար իրագործուիլ ո՛չ խաչահանգիստով ո՛չ պահպանիչով և ոչ ալ իրենցմէ մը տաւորապէս շատ յետեւալ քանի մը քահանաներով:

Ընդհ. առաջնորդ մըն ալ չը պիտի կրնայ շատ գործ տեսնել Ռուսմանիոյ մէջ: Պահ մը նոյն իսկ ենթադրելով որ կարող և արժանաւոր մէկը ըլլայ առաջնորդը, իր գործունէութիւնը ամուլ պիտի մնայ, որքան ասան որ տարրը որուն զարգացման կաշխատի, պատրաստակա՞նութեան ապացոյցներ չտայ այդ աշխատանքէն օգտուելու: Այս պարագաներուն մէջ, ընտիր առաջնորդ մը պիտի նմանի ընտիր ուսուցչի մը որ անընդունակ աշակերտներէ շրջապատուած ըլլալու դժբառութիւնը ունի:

Կղերէն խեր չկայ. այս սկզբունքը իրեն հիմ բռնելով է որ Ռուսմանիոյ հայ երիտասարդութիւնը ճամբայ ելլելու է: Ապա թէ ոչ իր ժամանակը կորսնցուցած պիտի ըլլայ այնպիսի քրննադատութիւններով, որոնք որքան ալ արդարացի ըլլան՝ ազգային փրկութեան ճամբուն մէջ լոյսի նշոյլ, յոյսի կայծ մը կազմելէ հեռու են:

Անշուշտ ըսել չենք ուզեր թէ կղերը բոլորովին մեկուսացուելու է. Ռուսմանիոյ մէջ շնորհքով քահանաներ ալ կան. անոնց օժանդակութիւնը եթէ անչահախնդրութեամբ և բուն անձնուիրութեամբ ընկերանայ, թանկագիր կրնայ ըլլալ: Բայց նախաձեռնութիւնը, գործին ծանրութիւնը անոնց ձգելու չէ, արտում քննադատի գերը միայն ստանձնելով: Անոնք ոչ ընդունակ և ոչ ալ յօժար են այդպիսի

վեհ, բարձր գործ մը գլուխ հանելու:

Կղերէն խեր չսպասենք: Անհնարին բան, խօլ ակնկալութիւն է ատիկա: Մեր բովանդակ յոյսը մեր վրայ պէտք է դնենք, գործելով այն բարձր իտէալներով որ ամէն խոհուն և լուրջ երիտասարդի գործարանական մէկ մասն են: Եթէ երիտասարդութիւնը յարատեւ կղերքնադատել, աշխարհի մնացեալ մասն ալ երիտասարդութիւնը պիտի քննադատէ. աւելին պիտի ընէ. պիտի պախարակէ զայն, զի աս դարուն մէջ, այս ազատ միջավայրին մէջ, իր ճիտին պարտքն է վերջ տալ ազգային այդ գանդաղ ինքնապանութեան, և հայ լեզուն, անունը, քրոնքը, կեանքը պանծացնել, կամ գէթ անկորուստ պահել, կարպաթներէ սկսեալ մինչեւ Գանուբ:

Օ Ր Ը Օ Ր Ի Ն

ԶԵՅԹՈՒՆՑԻՆ
 —)(—

Ազգային լուր մը կուզէ՞ք Պոլիսէն:

—Յունիսի սկիզբները, Զէյթունի զօրանոցին համար, չորս թնդանօթ կը տարուի գոմէշներէ լծուած ութը սայլերու վրայ: Այդ չորքոտանիները, որոնք ուժեղ կռնակ ունին և անընկճելի սրունքներ, ճամբան կը շարունակեն մինչեւ ուր որ հարթ է ուղին: Բայց զառկվերեկածնուն պէս, լեզունին կախ, աչքերնին յուսահատ, անշարժ սեղեղներն կը կենան՝ ազաչաւորի խօսուի գէմքով մը, թէ ասկէ անդին ալ մեր գործը չէ:

Հապա թնդանօթները: Տեղացի հայերը գոմէշներու պէս կը լծուին սայլերուն, ու երկաթէ սամիներուն տակ դուռած հլու պարանոցները կը քաշեն երեք ժամու ճամբան և յաղթական կը հասնին նշանակուած տեղը: Զինուորները բարեւի կիցած են թնդանօթներուն. այն տեղ ներկայ է կարապետ եպիսկոպոս, ներկայ են քահանաները ու 200ի չափ մանուկներ՝ պատրաստի երգը բերանին, մինչեւ որ թնդանօթները կը տեղափոխուին շնչապառ իրենց հանգստարանին մէջ: Գալով մեր Զէյթունցի կարիճներուն, անոնք ալ վիզերնին լուծերէն ազատած ու քրտինքնին սրբելով, հատկապէս շնչառութիւններն կը դիւրացնեն օդին մէջ սաւառնող երգին ու մալթանքներու ծրփանքին տակ:

Ճմլոց չէ՞ այդ տեսարանը Ռուսիոյ սարերուն տակ: — Զէյթունի պատմութիւնը, հինէն սկսած, դարերով անարատ շարունակուած է անակնկալ գէպերու յաջորդութեանը մէջ: Մեր արիւնի ու կրակի տարին, ուր բոցն ու սուշը, իրարու ձեռք ձեռքի տուած, քաղցին կեանքերու և շէնքերու մէջ, այդ թընդանօթներն էին՝ որոնք լեռներու ստորոտէն ու կիրճերու տակէն իրենց ուռմբը նետեցին գէպի վեր, գէպի մեր Զէյթունցի լեռնականները: Հա, ճիշդ է, ատոնց բերնէն արձկուած երկաթի կտորուանքն ու ուռմբի պատիճները, իբրեւ կռիւի պաշար, հաւաքուեցան կրներու և աղջիկներու ձեռքով և գէպի ետ դարձուեցան՝ թշնամի բանակին մէջ աւելի մեծ աւերումներ գործելու, բայց և այնպէս, գէշ յաջողութիւններ ալ ունեցան մերիններուն մէջ. կտրիճի լանջքեր ու թարմ կեանքեր շարգուփշուր եղան հրանօթներու ժայթքումին տակ:

Ու հիմա, մեր Զէյթունցին, իբրեւ թէ իր մէջը սպաննուած ըլլային ամէն ըղձանքներ, ու ամէն պատուարներու ժողովուն մոռցողի մը պէս, վիզը կը դնէ պողպատէ սամիներու տակ՝ իր կուրծքը փեռեկապով թնդանօթները քաշելու գէպի գառիվերներ, և ինքը իր ձեռքովը կը տեղափոխէ այդ մահերը զօրանոցին մէջ, ահաւոր բերանները դարձնելով գէպի Զէյթունի տուները: Իրաւ կըսեմ, հերոսական պատմութիւն մը կը քանդուի մտքիս առջև:

Ձէյթունցին, «Սիսուան» մէջ նկարուած խաչակիր պատկերին վրայ թրթուռ կենդանի ձիաւորն է, ասպետի շարունակուած ձիւքերովն ու լեռնականի անեղծ մնացած գիծերովը: Խարտեաչ կտրիճ մըն է աչքիս առջև, հասակով միջակէն վեր քան թէ վար. աչքերը խաժի մօտ՝ երկնքէն փոխ առնուած կապուտովը բարեխառն, ո՛չ գէր, բայց աւելի նիհար. դեղձան մազերը որը մոլոր ճակարին ու թիկունքին վրայ ծփծփուն: Ճապուկ է քարերուն վրայ ու փոսերու վրայէն ցածկուող այծեամբին պէս. աւրիւնուշտ է իր ապառաժներուն տակ սըլքտացող վագրին պէս. խեռ ու հետտ է իր սարերուն ապառաժներուն պէս՝ որոնք կայծակէն անվախ, դէպի վեր կը ցցուին հպարտ: Իր հաւատարիմ ընկերը՝ երիվար մըն է, իրեն պէս չարքաչ և սուր հոտառութեամբ: Թռչկոտ է ան, ջերմանդամ. «Յորի» մէջ նկարագրուած նժոյգին պէս՝ երբ վառագին հոտն ու շեփորին շոնիզը կառնէ, ոնգունքները կընդլայնէ, սկանջները կը սրէ ու ոտքերը գետնը կը զարնէ: Աւերը իր տէրը ունի կոնակին վերայ, ատրճանակները խրած գօտիին մէջ, կը խայտայ, կը ճախրէ և թեթեւ հրամանի մը կըսպասէ վտանգին մէջ նետուելու մըրկի վազքովը: Աւ այդ Ձէյթունցին, կը կրկնեմ, պարանոցը գնէ՝ այսօր լուծին տակ իր գոմէջին տեղ և անոր չկրցածը ընէ՝ կուրծքին ու փորին վրայ ծուծ չորքոտանիի պէս: Կը սոսկամ . . . :

Ասոր մէջ եթէ բարոյական սոսկալի անկում մը չկայ մեր սիրական ասպետին համար, արհամարհանք մը ըլլալու է: Կար-

ծեմ թէ ան լուիկ մեղի կըսէ որ, երբ, սուրին ու կրակին մէջ, ինծի կեանքին անհրաժեշտները հարկաւոր էին, դուք չնչին օգնութիւն մըն ալ չըրէք, դոնէ ինչ որ ձեռուընուզ կուզար՝ ան ալ չհասցուցիք ինծի:

Բայց ոչ. ա՛տ ալ չեմ ուզեր տեսնել կտրիճի այդ աղուոր դէմքին վրայ: Ես աւելի պիտի հաւատամ թէ մեր Ձէյթունցին վիզը դրաւ թնդանօթներու սայլին տակ, մեղի ըսելու որ. հոգ չէ, դուք մեղի համար անփոյթ եղէք որչափ որ կուզէք. մենք այսօր թնդանօթները կը տեղադրենք թշնամի զօրանոցին մէջ, երբ վաղը կամ միւս օրը պէտք կունենանք, Ձէյթուն կը ցնցէ «Իր ժայռոտ գլուխը» վագրի ճանկերով կը նետուինք անոնց վերայ. առիւծի պէս մեր ճիրաններուն մէջ կառնենք զանոնք. և մեղի դարձուած թնդանօթներուն ահաւոր բերանները կը շիտկենք դէպի թշնամին, ու, իր հրանօթներովը երկաթ ու կրակ կը տեղանք լեռներէն վար, ինչպէս սը ըրինք արդէն: Եւ սակայն չմոռնանք Ձէյթունը. չմոռնանք թէ սոսկալի նախատինք մըն է դէպքը իր բոլոր մանրամասնութիւններովը: Ան իրաւունք ունի ըսելու որ եթէ Ձէյթունցիներս գտնէինք այն օգնութիւնը՝ ո՛ր աւրժանի էինք, արդէն, մեր վիզերը ընաւ չէինք ճկեր երկաթէ սոմիներու տակ ու վերէն՝ մեր հեղանակի ծաղրին տակ կը խայտառակէինք թնդանօթները: — Աւ կասկած չկայ թէ Ձէյթունի պատմութեան մէջ արատի այդ գիծը չէր քաշուեր այսօր:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Լորկն, 10 Յուլիս

Յուլիս 4ը, Ամերիկայի անկախութեան 122րդ տարեդարձը մեծ շուքով տօնուեցաւ: Առտուն կանուխ սկսան խրատնաձայնութիւնները և հրախաղութիւնները. ամբողջ քաղաքը հրեղէն ծով մը դարձած էր. զանգակները անընդհատ կը զողանջէին. փողոցները լի էին խուռն բաղմունքով: Զօրավար Սամուելի յաղթութեան լուրը եկաւ մեծ զարկ տալ հանրային եռանդին: Յուլիս 4ի առթիւ հետեւեալ պաշտօնական կարգադրութիւններն եղան. հեծանիւի մըցում. քրիքէթի և պէսպոլի խաղեր. 5000 մանր սղոց Սիթի Հոլ մուտքը, և զօրահանդէս որ յոյժ փառաւոր եղաւ: Զօրահանդէսէն ետք Ամերիկայի անկախութեան թղթերը կարգացուեցան որոնց առթիւ քաղաքագետը սիրուն ու սգեւորիչ տոննաբանութիւն մը ըրաւ:

Բնկղկած Պուսկոյն շոգինաւին մէջ 13 հայ ճամբորդներ կային, որոնցմէ մէկը միայն աղատած է և սա վշտալի պատմութիւնը ըրած է խղճուող հայ քահանայի մը և անոր ընտանիքին վրայօք: Քահանան ընտանիքով կը մտնէ մակոյկ մը, ուր կան եղբր ուրիշ 30 ճամբորդներ. սակայն նաւատիրները ընաւ ջանք չեն ըրած մակոյկը ծով իջեցնելու: Քահանան բաղկատարած սկսած է բարձրաձայն աղօթել մինչև մակոյկին անյայտանալը:

Այս քահանան Լօրէնսի տէր Ստեփան քահանան էր, որ ընտանեօք շոգինաւ նստած էր հայրենիք դառնալու համար: Տ. Ստեփան ունէր կին մը և ե-

րեք զաւակներ, որոնց անդրա-նիկը հաղիւ 12 տարու կար: Ա. Չօլագնան

Յօջակ, 8 Յուլիս

Ռուսանիոյ հայ քահանաներէն մէկ քանին, կարծես գործնականօրէն հերքելու համար այն դիտողութիւնները որոնք կուզուին իրենց, ազգային զարգացման գործին մէջ ցոյց տուած աններելի անփութեան համար, քանի մը տարիներէ ի վեր գրական ապարդիւն գործունէութեան մը տուած են ինքզինքնին:

Գարագուռը բացուած է Պուսկոյնի Տ. Ստեփան քահանայէն: Ենչի բազմաթիւն ուսուցիչ Պ. Սրմազանեան, արդէն տարբեր թերթի մը մէջ իր կարծիքը յայտնած էր սոյն քահանային գրագած գործերուն վրայ, որոնք, կըսէր, պատուի եւ փառքի հասնելու ձգտումներէն թելադրուած են քան թէ ազգային շահերը պաշտպանելու դիտումնէն: Ամէն պարագայի մէջ ես շատ ցաւալի կը գտնեմ որ անձ մը առանց հմուտ ըլլալու լեզուի մը, եւ առանց պէթ ուրիշներու հմտութիւնէն օգտուելու՝ ձախող փութկոտութիւնով մը հրապարակ նետուի եւ հայ քահանայական դասուն լրջութիւնը տարակուսի ներքեւ ձգտարներու առջև:

Ես կը կարծէի թէ Տ. Ստեփանի անյաջողութիւնը եւ այն արդարացի քննադատութիւնները որոնց ենթարկուեցաւ, դաս մը պիտի ըլլային ուրիշներու: Երբեք: Ոգեւորութիւնը յարածուն ընթացքի մէջ է: Աւրիշ քահանաներ եւս (՝), հաւատարմութեամբ կը խնայեն իրենց, ձեռնարկած են մէկը «Ձղուած» թարգմանելու եւ միւսը աղօթքներու հաւաքածոյ մը որուն ձեռագրերը սրբապուստիկ համար ձեռքէ ձեռք կը պատկանին:

Տէր հայրերք շատ աւելի լաւ կընեն եթէ նախընտրեն հայկական սքանչելի աղօթքները եւ շարականները մայրենի քաղցր եւ անաղաթ

(՝) Անշուշտ գովելի բացատրութիւն մըն է Կալայի Տ. Գեորգի քահանան, որուն Օրացոյցները այնքան հրահանգիչ են եւ ախորժով կը կարգացուին: Ծ. Խ.

ԼՈՒՍՆԿԱՅ ԳԻԾԵՐՈՎ

(ԳԱՂՔԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԷ)
Սագօին
Ա.

— Լուսնակ գիշեր քախառնով քուճ չունիւր.
— Ձիւ սեւեռողը կարծուել է քի տուն չունիւր.

Մեղմ մըմունջ մը, հեւաղող երգ մը, որ այդ ամառ գիշերուան պայծառութեան մէջ կը թրթուր, կերկնար ու կը նուաղէր:

Քաղաքէն հեռու, հանրային պարտէզէն անդին, ծովեղբրքին մօտ սեպացած զառիթափին վրայ, կէս մը անդունդին վրայ կախ, փոռած էր Սիսակ. գլուխը ձեռքերուն մէջ և աչքերը դատարկութեան յառած կը շարունակէր իր սիրաբոյր երգը:

Սիսակ այդ օրը շատ քաղած էր. ժամերով թափառած էր աննպատակ ու անգիտակից. ծայրագոյն վիշտ մը, հոգիկան տագնապ մը մղած, վարած էր զինքը դաշտերու, պարտէզներու, թուփերու, մացաններու մէջէ. շուններու վոնմակներ հետապնդած էին զինքը վայրի հաջոցներով,

այգեպաններու սպանալից կոչիւրը զգուշացուցած էին զինքը եւ անյորդիները արգահատանքով իր վրայ նայած էին. բայց ինքը բան մը չէր լսած ու բան մը չէր տեսած: Իր ներքին ցաւը այնքան ուժով ու այնքան լեցուն եղած էր որ, քնաչըջիկի մը պէս քաղած ու քաղած էր միեւնոյն ճամբան, թող տալով որ սուր փուշեր երեսը ու ձեռքերը ճանկատեն և հապուստները բղկտեն:

Ու երբ ալ բողբոլին յոգնած էր, շունչը հատած եւ ծուռները կթոտած, վերջին գերագոյն ճիգով մը ուղղուած էր ծովեղբրը ու հոն ինկած:

Ժամեր անցած էին. արեւը շատոնց մարը մտած էր ու վերջալուսին երանգները մարած. լեցուն լուսնիկան վեր ելած էր Սեւ Մովսէս լուզարանէն՝ իր արծաթի շառայներով գիշերուան ստուերները հալեցնելով. եւ դեռ Սիսակ կը մնար իր անդայ գրութեան մէջ, նուազ ու թոյլ ձայնով մը կրկնելով իր երգին յախառնական յանկերգը.

— Տուն չունիւր պաշտ սուն չունիւր:
Բ.
Հաղիւ 23րդ տարին բոլորած էր

Սիսակ, ընտանեկան խաղաղ միջոցը լորտի մը մէջ, երբ 96ի սարսափներէն շատերուն հետ ինքն ալ նետուած էր պուլկարական ափունքները:

Հայրը ու եղբայրները սպանուած, իրենց տունն ու վաճառատունը կողոպտուած էին. թէեւ դիւրաբեկաց ու անկախ կեանքի մը վարժուած, սակայն անարտունջ կրած ու մարած էր պանդխտութեան, անգործութեան բոլոր տուալտանքները:

Հոն, հեռու ծխացող հայրենիքին մէջ դեռ մէկը կը մնար իրեն. պաշտելի նշանածը՝ Աննան, որ Կահմբեր իր վերագարձին կսպասէր: Ու Աննայի անուշ հեռապատկերին, ապագայ երջանկութեան մը թողուցիկ երազանքին առջև կը մոռնար պահ մը իր անցեալ ու ներկայ բոլոր քաշածները ու սիրով կը կրծէր գաճած չոր հացը:

Բայց օրեր, ամիսներ, տարիներ կանցնէին և վերագարձի ցանկալի օրը չէր գար: Անոնք որ դրուած էին իրենց կայքն ու ինչքերը, բոլորովին ապահովուելու համար իրենց կողոպուտին մէջը, զինքը յանցաւոր ցուցցած էին. եւ բոլոր ունեցածները մատաղ տալէ ետքը մահուան ալ դատապարտուած էր:

Կըսպասէր ընդհանուր մոռացութեան մը որպէս զի կարենար Աննային մօտ վերադառնալ, բայց այդ օրը չեկաւ. եւ երկու երկար տարիներ շարատանջ գաղաբումներէ ետքը Աննայի վերջին նամակն էր որ կուգար եւ ամէն բան կը փակէր:

«Չեկար ու չեկար, կը գրէր Աննան. ծնողքս ալ չսպասեցին, եւ առանց զթալու արցունքներուս, ուրիշի մը հետ նշանեցին ինծի ու քանի մը օրէն ալ պիտի պսակեն, ես որ քեզի այնքան կը սիրեմ»

Վերջին անսպասելի հարուածն էր ասիկա եւ որուն տոկալու անկարող Սիսակ խենթի պէս քաղաքէն դուրս նետուած էր:

Գ.

Կէս գիշերը կը մօտենար. լուսնական ուղղաձիգ կեցած երկնքին խորը Սեւ Մովսէս մէջքին կը կապի փաղփուռ, անձայր ժապաւէն մը:

Գիշերուան խոնաւութեան զովացած մեղմ եւ անուշ սղոխ մը կը կըսէր օրօրել ծառերու սաղարթները՝ մարգերն ու ծաղիկները:
Սիսակ հովին այս անուշ ու զով փայտալանքէն քիչ քիչ ուշքի եկաւ Մեղմօրէն վեր առաւ գլուխը եւ նըր-

լեզուին մէջ հանգիստ թողուլ, փոխանակ ճապարակ եւ սխալ թարգմանութիւններով հրապարակը լեցնելու, ինչ որ անօգուտ եւ ծիծաղելի ձեւերով մըն է եւ բնաւ ակնկալուած գրական փառքին չհասցնեն:

Եթէ կը փափագէք, Ս. Հարգք, որ Ռուսմանիոյ հայ գաղթականութիւնը չկորսուի, մեր եկեղեցին կանգուն մնայ, ձեռք ձեռքի տուէք, համարաշխ գործակցութիւն մը ցուցուցէք որուն այնքան պէտք ունին մեր ազգային գործերը: Եթէ իսկպէս ազգասէր ու եկեղեցասէր էք, արքայական պատուանշան մը կորզելու համար հայուն նուիրական մատանները մի խեղաթիւրէք, այլ գաղութին ազգային վիճակը բարւոյնացնելու փորձեցէք, ու այն ատեն միայն մեր ամէնուս երախտիքին ու յարգանքին արժանի պիտի ըլլաք:

Այս է կարծիքս Ռուսմանիոյ բովանդակ հայ կղերականութեան վրայ, առանց բացառութեան:

Վահրամ Մամիկոնեան

Սիւրիստի, 13 Յուլիս

Երկ կատարուեցաւ տեղւոյս ազգային երկուս վարժարանին մրցանակարարութեան հանդէսը: Ցաւով կը յայտնեմ սակայն թէ հանդէսին լրջութիւնը խանգարուեցաւ վարժարանի վասակապաշտ ուսուցչին անհեթեթ մէկ ատենախօսութեամբը, որով ծանր ու նախատախից ակնարկութիւններ ուղղեց պատուաւոր անձերու: Ներկայ թաղ. խորհուրդը, հոգաբարձութիւնն ու հանդիսականները այնքան սրտմտեցան որ երբ Պ. Սէթեան ուղեց երկրորդ անգամ բեմ կ'ըլլալ իր շաղկարատանքը շարունակելու, ամէն կողմէ «լուէ» պոռոցներ ու թող շարուեցաւ որ խօսի:

Այս միջադէպ այնքան վատ սպաւորութիւն ատաղ բերաւ որ հոգաբարձութիւնը անմիջապէս դուրսընկաւ որոշեց հրաժարեցնել այդ տպիրասան ուսուցչին, որ նախագուշակելով արուեստը որոշումը՝ փութաց նոյն օրն իսկ անձամբ ներկայացնել իր հրաժարականը:

Ստուգապէս կ'իմանանք թէ այս պարտը, Արմաշի դպրեւանքի այս բարկապտուղը, Պոլսի պիտի երթայ

տաւ. պահ մը ապուշ ապուշ սկսաւ զիտել իր շուրջը, վերն ու վարը: Ո՞ր էր, ի՞նչ կընէր ճոտ միմակուկ:

Յանկարծ սուր ասեղի պէս բան մը իր ուղեղին մէջ միտեցաւ. իր ցաւին վերջուցումը կ'ունենար.

—Աննան գնաց, մրմռաց.

Եւ հրատապարտուած բոլոր մարմինը ցնցեց եւ աղիքները խորովեց:

Թէեւ շատ լացած էր, բայց նորէն արցունքի երկու խոշոր կաթիլներ իր տոգունած այտերէն վար կտխուեցան:

Ձեռքերը ծրարած, գլուխը կտխ կը մտածէր:

Ձէ, ալ չէր կրնար ազրիլ այս կեանքը որ իրեն համար այնքան լեցուն եղած էր շարժարանքներով:

Ձէ, ալ չէր կրնար շարունակել այն քարքարուտ ու գարուփոս ձամբան, որուն վերջին լուսատու փայտը՝ Աննա'ն ալ կը մարէր:

Եւ իր որոշումը տուաւ:

Իր սիրելի ընկերակիցներուն ու միաբանակիցներուն հետ զուգորդարար գործելու:

Երթայ բարով: ԿՐԱԿ

Ք Ր Ո Ն Ն Ի Կ

Կը յիշուի թէ շարգէն ետքը, Պոլսոյ մէջ ապրող բոլոր յանձնաժողով մը կազմուեցաւ, դաւառացիներէ բաղկացած, որուն պաշտօնն էր տնտեսական տաղնապէն (°°°) շարգուած, կողմադրուած և կամ գիշերանց արտաքսուած հայաստանցիներուն մնացեալ գոյրերը իրենց տէրերուն ետեւէն հասցնել և անոնց երեսի վրայ մնացած գործերը կարգադրել:

Արդ՝ շատ մը դանդաղանք հասած ըլլալով պատրճարքարան այս յանձնաժողովին գործելու եւ շանակին վրայ, քաղաքական տնտեսութեան համար թէ որքան իրաւացի են զանգատները և զեղծումի կասկածները:

—«Ինչպէս գիտն», Եւմուրի Տ. Խորէնի մասին պատրիարքարան հասած ամբաստանագիրը հրատարակելով, անսուսուցիչ անհաւանքով, որքան կուտայ այդ եկեղեցականին: Արդարեւ անկարելի է տարբեր անուն մը տալ աչքի առջեւ ունենալով ամբաստանագիրը ուր պատմուած է թէ ինչպէս կը գիտնուիայ, և շատ մը ցաւալի տեսարաններու տեղի կուտայ: Ամբաստանագիրը կը խօսի նաեւ Տ. Հօր լուսնոտութեան վրայ, որ երևան կուգայ գլխաւորապէս պնակ պտտցուցած ատեն... կանանց կողմը:

—Տիգրիսի մէջ կը կարգանք. Ամերիկայի հայ երիտասարդներէն Պ. Արմենակ Ալէօն յաջող քննութիւններ անցընելէ ետքը

լուսնկային շողերուն տակ, ալիքներէն դուրս ինկած, սրածայր խարակները կը պայտալային:

Պատիկ ոտուով մը եւ անա ամէն բան կը լինար. իր գանկը պիտի ճեղքուէր խարակներուն վրայ, մարմինը պատառ պատառ պիտի ըլլար, ալիքները պիտի լուսային զինքը, լուսունկան իր պատանքը պիտի հիւսէր, և պլպլացող աստղերը իր վրայ պիտի կաթեցնէին իրենց լոյս արցունքները:

Ինչ աղուոր էր մահը այդ լուսունկայ գիշերուան մէջ:

Անգոյն շուրթերուն վրայ դառն ժպիտ մը թրթռաց. բնագոյով մը չէր միթէ որ ինկած էր ճոտ:

Իր որոշումին մէջ հաստատ, ոտքի ելաւ և վերջին անգամ մըն ալ ետին, կեանքին նայեցաւ:

Պ.

Կեանքը հոն անուշ ու ետուն էր. հանրային պարտեղին մէջն ու դուրսը հարիւրաւոր լապտերներ կը պլպլայային. արեւելեան և արեւմտեան նուազի խոսն պատասաններ մինչեւ իրեն կը հասնէին:

Պուլկար ժողովուրդը այդ լուսունկայ գիշերուան աղուորութիւնը

Փիլինքսի զինուորական ակադէմիան շրջանաւարտ ելեր է:

—Տ. Մաշթոց վարդապետ Ռուսթրի մէջ 20ի չափ երկսեռ հայ մանկախնէր Ս. Փրկիչ եկեղեցիին սրահը ժողովելով անոնց կարգաւ, գրել և ձայնագրութիւն կը ստղծեցնէ:

Նոր աշխարհի մէջ անդրանիկ հայ դպրոցի մը այս սղղունաւորութիւնը ուրախալիթ է և նախաձեռնարկ վարդապետն ալ շնորհատրելի:

—Ամերիկայէ Խարբերդ դարձող հայերը ողջամբ իրենց հայրենիքը հասեր են: Մինչդեռ ուրիշ հայ մը որ Նիւ Եօրքէ մեկնած էր, Իոկենտերունի մէջ ձերբակալուելով Տիգրանակերտի բանտը նետուեր է:

—Յունիսի մէջ, Պոսթընի հեծելազօրաց գնդին հետ կամաւոր գնաց Մարաշցի Պ. Ոսկերեան Արզգեան անուն 24 տարեկան երիտասարդը: Նոյնպէս Պ. Յովանէս Երկանեան, Ռոտոթոցի, որ մէկ ու կէս տարի է վեր ծովային պահեստի զօրախումբին միացած էր, կամաւոր գրուեր և իր խումբով հաստատուեր է «Իւււ-ձէմչի» նաւուն մէջ որ այս պահուս անշուշտ մեկնելու հրամանը ստացած ըլլալու է:

Փառք և դափնի հայ քաջարի կամաւորներուն:

—Այլազոյսքի որ միշտ քաջաւոր ի և անդու կաշխատի իր Թեոփոսոյ ամբաստանցին մէջ նորանոր հրաշակերտներու ըստեղծման, Բարիզի 1900ի ցուցահանդէսին պիտի ներկայանայ, իր անդուզական նկարներովը: Անշուշտ մեծ յաջողութիւն մը վերապահուած է տիեզերահռչակ հայ արուեստագէտին:

—Պ. Արշակ Չօպանեան Բարիզի

կը վայելէր հանգիստ եւ երջանիկ: Նախանձի կատաղի մտածում մը անցաւ Սիսակի մէջէն. ինք հոն անդուզին եզերքը կեցած մահուան կը պատրաստուէր. անդին հազարներ կեանքին պարգեւած շնորհները կը բերուէին:

Բուռնցքները երկնցուց զկտի վեր եւ խորունկ «ախ» մը բրդաւ սըրտէն:

—Ինչո՞ւ ինք այնքան թշուառ եղած էր:

—Ինչո՞ւ անոնք այնքան դուարթ եւ երջանիկ էին:

Նորէն գլուխը ձեռքերուն մէջ առաւ ու նստաւ:

—Ի՞նչ ըրած էր ինք:

Ու իր ինչուններու այս նոր ուղղութեան մէջ, երբ իր աչքին առջեւ բերաւ ամբողջ անցուցած կեանքը, շատ ապուշ և շատ եսական զբաւուր գայն. իրեն համարապարտ և իրեն համար միայն մտածած էր: Իր ազգին ճակատագիրը վարած էր զինքը, բայց ինքը իր կողմէ բան մը չէր ըրած անոր վրայ ազդելու:

Մահը իրն էր հիմա. հոն անդունդը բաց էր, բայց այդ վերջին յուսահատ որոշումն ալ իր եսասիրական զգացմանց նոր ապացոյցը չէր. կու-

մէջ մօտերս պիտի հրատարակէ գրական-գեղարուեստական հայերէն հանդէս մը, «Անահիտ» անուն, որուն գլխաւոր նպատակներէն մէկը պիտի ըլլայ Քրանական մտքին, Քրանական գրականութեան և ուսահայտոյ մէջ միջնորդ մը ըլլալ:

«Մշակ» այս լուրը հաղորդելով շատ անհամ կը գտնայ «Անահիտ» անունը ինչպէս նաեւ Սոխակ, Մալիկ, Պոսակ, Արծիւ Վասպուրական անունները որոնք, կըսէ, շատ չանցած կը դառնան մէյմէկ ագուաւ, փուշ, քսակ և բու Վասպուրականի:

Մենք առանց անուան տեսակին ուշադրութիւն ընելու, կատարեալ յաջողութիւն կը մագլթենք Պ. Չօպանեանի, որ գրականութեան մէջ ունեցած ձեռնհասութեան փորձերը առաջին անգամ չէ որ պիտի տայ:

—Պ. Մազսուտ Միհրդատեան, Պոլսեցի, որ ազգ. կեդր. վարժարանի անդրանիկ շրջանին առաջին հանդիսացող աւարտականն է և որ իբր հինգ տարիէ ի վեր Բարիզ կը գտնուի, ուր յաջողած է փայլուն քննութեամբ մտնել էքզլ Սանդրալ, այս տարի աւարտեր է այդ բարձրագոյն վաստարանին ընթացքը, մաթեմատիքի առաջին վկայական ստանալով:

—Բարիզի հայ ուսանողութեան մէկ մասին յաջողութիւնը չկըրնար մոռցնել տալ այն ուսանողները որոնք ամէն պաշտպանութենէ զրկուած, երկարատեւ զրկանքներուն մէջ տառապելէ ետքը, ամենէն տխուր վախճանին կենթարկուին: Աստուծէ է նանսի ըժշկական համալսարանի ուսանող Ռոտոստոցի Պ. Արտաշէս Պէրպէրեան, որ չքաւորութեան պատճառով իր ուսմանը ընդ-

զէր երթալ ինք, ու իր ետեւը կը ձգէր Աննան, որ թերեւս իրմէն աւելի շատ կը տառապէր, եւ իրեն պէս ուրիշ հարիւրաւորներ ալ չկային միթէ:

Ձէ, պէտք էր վրէժ լուծել, պէտք էր պատժել անոնք որ իրենց այնքան չարիք հասուցած էին. մեռնիլ ամէն ատեն կարելի էր:

Ու միտքը ինկաւ որ իրեն պէս զպրոցէ ելած երիտասարդներ ուսման հրացան ձեռք առած վրէժի ճամբուն մէջ կը յառաջանային:

—Այո՛, պէտք էր միանար անոնց, միանար՝ հայրենիքը, Աննան փրկելու:

Ու այս վերջնական համոզումին մէջ անխախտ ոտքի ելաւ, ուղղեց իր ձկած իրանը. ալ աչքին մէջ արցունք չկար, վրէժի զաղափարին կատաղի ցուրը միայն:

Ալ չնայեցաւ անդունդին վրայ. ետ դարձաւ ամուր քալուածքով մը, շարունակելով իր հին երգը, բայց այս անգամ առողջ չեջտով մը.

—Միխիլայանի վարդ զիշտուան յուսնակն, անուշ յուսնակը:

ՎԱՀՄԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

—(—)

հատել է ետքը, Բարիզ դարձած է, ուր իր քայքայուած առողջութիւնը չգիմանալով դեղաբանի մը մէջ աշխատելու ծանր ծառայութեան, թշուառութենէ և սնունդի պակասութենէ մեռեր է քսան տարեկան հասակին մէջ: Բարիզի հայ ուսանողները շքեղ պատկ մը նուիրեր են իրենց «սիրելի» ընկերոջ յիշատակին:

—Մարտէյէն մեզ կը գրեն թէ նոյն քաղաքին մէջ հայկական ընթերցարան մը հաստատուել է, որ առ այժմ միայն շաբաթական երեք օր բաց պիտի ըլլայ հասարակութեան առջեւ:

—Ռուսական գեապանը երկրորդ անգամ է որ պատրիարքարան կերթայ, հայ կրօնքը ընդունելու փափագող ռուսական հպատակ հրեայ ազգիկը իր հօրը տունը վերադարձնելու համար: Ազգիկը միշտ անդրդուելի կը մնայ ու «հայ եմ, հայ պիտի մնամ» կըսէ: Անհուն սէր մըն է որ դեռատի հրեաներն մղած է այդ ծայրայեղութեան: Բարտաւոր Ռոմէոն կարապետ անուն գերձակ մըն է, եղբորորդի ծանօթ «ազգայիններ» Մկրտիչ Մելիքեանի:

—Պոլսոյ մէջ տարտամ զրոյց մը կը շրջի որ իբր թէ Օրմանեան Պատրիարքը պիտի հրաժարի: Սուլթանը յայտնած կըլլայ իրեն թէ իրմէն չանցնիր ու չթողուր իր... սիրելի Պատրիարքը: Օրմանեանի այս սպառնալիքը շատ կը նմանի գիւսանդիտական դարձուածքի մը:

—Սարմատէն կը հասնի ցաւալի լուր մը որ կապացուցանէ թէ հայ որբերը լաւագոյն որբանոցներու մէջ իսկ հանգիստ պիտի չգտնեն: Արդէն ասկէց առաջ գրած էինք Ղալասի որբանոցին վերատեսուչ և Լեպոսուսի գործակալ հովիւ Պէրկիմանի վէճը՝ նոյն որբանոցի տնօրէն ամերիկահպատակ Պ. Պաղտասարեանի հետ: Կերեւայ թէ վէճին հետեւանք եղած է հովիւին դուրս նետուելը. որովհետեւ սա՛ վերջերս բազմաթիւ զինուած սրիկաներով որբանոցին վրայ խուժեր է յարձակմամբ գրաւելու համար զայն: Սանդիակօի կատարեալ մանրանկար մը որ ներսի պղտիկները ահաւորողի մատներ է: Բարեբախտաբար հովիւը, գիւղէն հասնելիք օգնութիւններու վախէն, յարձակումը կարճ կապելով հեռացեր է: Այս գայթակղալի գործը տեղոյն ռուս և անգլիացի հիւպատոսներուն քննութեանը յանձնուեր է:

—Անցեալ շաբթու Պոլսոյ Գաւորիկի մէջ մեծ հրդեհ մը ծագելով 57 տուն և 17 խանութներ այրեցան: Այրած շէնքերու կէսը հայերու կը պատկանէին:

—Գահիրէի մէջ սկսած է հրատարակուել... քրդերէն լեզուութեամբ մը «Քիւրտիստան» անուն:

Խմբագիրն է հանրածանօթ Պէտրղամ քուրտ իշխանին որդին Միկիլատ-Միտհատ իշխանը: Այս թերթը եռանգով կը հրատարակուի հայրենակիցները թողուլ իրենց վայրենի բարբերը և քիչ մը... մարդ ըլլալ՝ մէկ կողմ նետելով թուրք կառավարութեան դահիճները ըլլալու բարբարոս գերը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

Թ Ո Ւ Ի Ք Ի Ա

Դուռը միայն Ֆրանսայի չէ ուղղիւր բացարձակ մերժում մը Պոլսոյ հայկական ջարդերուն միջոցին Ֆրանսահպատակներու կրած ֆիսաներուն հատուցման համար, այլ նաեւ բոլոր այն տէրութեանց որոնք նմանօրինակ պահանջումներ ըրած էին:

Դուռը ծանուցագիր մը ներկայացնելով գեապաններուն իր մերժման համար սա շարժառիթները մէջ բերեր է:

Իսլամներէն ալ շատ սպաննուածներ եղան. ուստի անոնք ալ կընային հատուցումներ պահանջել:

Եթէ օտարահպատակները պահանջներ ունին ընելիք, կըրնան դատ բանալ անոնց դէմ որոնք ամբաստանուած են այդ խառնակութեանց համար:

Բարեկարգութիւնը մեծ դժուարութեամբ վերահաստատող զօրքերը զգալի կորուստներ կրեցին. վերջապէս նմանօրինակ անկարգութիւններ ուրիշ դաւառներու մէջ ալ պատահեցան և կառավարութենէն չպահանջուեցաւ հատուցումներ ընել ֆիսուուած անձերու:

Դուռը կը բողբէ յունական պատերազմական տուգանքէն գումար վար դրուելուն դէմ, որովհետեւ այդ տուգանքը առնուած էր՝ Թուրքիոյ կողմէ թեւ սալիան պարպուելուն փոխարէն:

—Դուռը կը բողբէ ծովակալներու որոշման դէմ, որոնք ընդգիմացան օսմ. նոր զօրքերու կրէտէ կղզին ելլալուն: Կրէտէ թէ տէրութիւններն ալ կը ձեռնարկեն իրենց զինուորական ջոկատներուն նորոգմանը կղզիին մէջ և թէ թուրք կառավարութիւնը տարբեր բան մը ընել չուզեր:

Սակայն, հաւանական չէ որ տէրութիւնները Դրան աս բողբին վրայ փոխեն իրենց ընթացքը:

—Թուրք կառավարութիւնը երկու միլիօն փամփուշտի հայթայթման համար պայմանագիր մը խմբագրած բայց դեռ չէ ստորագրած: 220,000 մաւզերեան հրացանի և 108 քրուքեան թնդանօթի գնման համար բանակցութեան սկսեր են:

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ Ը

Խաղաղութեան հաւանականութիւնը օր օրի կաւելնայ: Սպա-

նիոյ արդի նախարարութիւնը արժանապատուութեան վիրատուանք մը կը նկատէ խաղաղութեան նախաձեռնարկ ըլլալ. այնպէս որ թագուհին երբ հաշտութեան բանակցութիւններն սկըսին՝ իբրեւ բանագնաց պիտի նշանակէ եղեր զօրավար Բօլաւիտայ:

Վերջերս ֆրիլիպպեաններուն մէջ ապստամբներուն և Ամերիկացիներուն յարաբերութիւնները բաւական ձգտուած էին. նոյնը պատահած է նաեւ Բուպարի ապստամբներուն և ամերիկացիներուն մէջ: Բուպարի կողմէին որ Սանդիակօն առնուելուն պէս իրենց յանձնուէր, Բայց վերջին լուրերու նայելով՝ Ամերիկեան կառավարութիւնը միջոցներու գիմեր է թէ՛ Գալիքսթօ կարսիան և թէ՛ Ալիսալուօն հաշտեցնելու համար ամերիկեան բանակներուն հետ:

Ապստամբապետ կարսիա՝ Սանթիակօէ դարձին, ճամբան կը հանդիպի սպանիական ջոկատի մը, որուն հետ ընդհարուելով կատիպուի նահանջել, 41 հոգի կորսնցնելէ ետք: Սակայն, Բուպարիներուն այս պարբութիւնը մասամբ փոխարինուած է ամերիկացիներուն ձեռք բերած յաջողութեամբը ուրիշ կէտի մը վրայ:

—Յուլիոս Գին ամերիկեան երեք զրահաւորներ մտեր են նիբի ծովախորշը և մէկ ժամ ուժբակոծելէ ետք մարտկոցները լուցուցեր են դանոնք: Սպանիական ժողովուրդը թնդանօթակիրը ընկղմեր է. նաւազները կըցեր են ազատիլ:

—Ամերիկեան էսքիբիս շոգեանաւ նիւեորքէն Միչիկիկական ուղեւորներ է 247 սպայով և նաւազով:

—Սանթիակօի կալուածատէրերը և բնակիչները որոնք չմասնակցեցան պատերազմին՝ Պ. Մաք Գինլիի պիտի ուղղեն ուղերձ մը՝ զիրենք սպանիական լուծէն ազատած ըլլալուն շնորհակալութիւն յայտնելով:

—Քէմենարաի և Կուանթանամաի պահակազօրքերը անձնատուր եղեր:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Ք

—)(—

Կը ծանուցանենք Սիլիստրէի մեր արգոյ բաժանորդներուն թէ Տ. Ալիքսան Եազըճեան յօժարած է ազնուօրէն ստանձնել Շարժումի գործակալութիւնը նոյն քաղաքին համար:

—Գահիրէէ ազգային մը մէկ տարեկան Շարժում կը նուիրէ Լարնաքաի հայ ընթերցարանին:

—Տ. Փ. Դաւրէժ. — Ստացանք զրամբ: Ձեր բարեկամին քերթուածը թէեւ շատ սիրուն ու մտացի այլ չափազանց երկար ըլլալուն անյարմար է մեր թերթին մէջ հրատարակուելու:

—)(—

Պ Օ Ր Ս Ա

Վառնա 18 Յուլիս

ՊՈՒՂՏԱՅ

Վախօն եօզ, լիպրա 47—51, հէքթօլ. 7—8 ֆրանք
Արապա, լիպրա 59—60 հէքթօլ. 9.10 ֆրանք
ԱՐԲԱ ԵՖՆԻ
Լիպրա 42—44 հէքթօլ. 4.20—5 ֆրանք

ՅԱՍՈՒԼԵԱ ԵՕԴ

100 օգգասը 15—20 ֆր. մալա կէօրէ: Առապա մուսմէլէսի Նարոյէսն 21 ֆրանք հիսապը իլէ տիր. Կիւնտէ 6—7 արապա պուղտայ, 14—15 արապա արբա կէլմէքաէ տիր: Մըսըր եօզ սըր:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱՆ-ԳԻՒԼԵԱՆ

—)(—
ԵՒՐՈՊԱՅԻ ԳԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԼԻՆԻ ԴՆՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՏՈՅ
—)(—
ԳԻՆ Է ՖՐԱՆՔ

Կը վաճառուի Շարժումի խմբագրատունը:

ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍԱՆՁԵԱՆ

Կ Ո Շ Կ Ա Կ Ա Ր

Մուսալլա, հաճի Հասան ազաի օթէլին տակ

—)(—
Ճաշակաւոր, տոկուն, ձեւաւոր կոշիկ շինել տալ ուղղող պէտք է գիմէ Պ. Ստեփան Խօրասանճեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կըլլայ:

Գիներ գիւրամատչելի:

ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ԶԲՕՍԱՐԱՆ

—)(—
ՀԱՃԻ ԲԱՆԱԳՕՐԸ ՃԻՇԴ ԴԷՄԸ
Կը բանեցունէ Պ. Տիգրան Թիւֆէկիւնեան և ընկեր

Արհեստին մէջ կատարելութեան համար երիտասարդ հայու մը ձեռամ սարքուած այս հովասուն, մաքուր ու գեղջական հաստատութիւն ոչ միայն պատիւ կը բերէ հայ ճաշակին, այլ և մեծ խթան մը կըլլայ որ հայ ու օտար փափակներին իրենց գարնանային ու ամառային ժամադրանքայր մը ընեն զայն գրօսնելու և ճաշելու: Պոստոսեան ախորժապի հովերուն ու Սեւ ծովի կապոյտ տարածութեան առջեւ:

Հակառակ այս հրապուրիչ առաւելութիւններուն, յաճախորդները պիտի գտնեն յոյժ գիւրամատչելի գիներ թէ ըմպելիքի թէ կերակուրների մասին:

ԽՄԲԱԴՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐՇՈՒՄ»

—)(—

Կը սպազորուին ամէն լեզուէ այցեատման, հասցեատման, նամակագրուի, հարսանեկան հրատարակիչ, մահազգ, ինչպէս նաեւ պրօշիւտներ:

Գիներն յոյժ գիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»

Վառնայի մէջ կը վաճառուի Մոյսալլա, թանկիկ Կէօղիպէօլիքեանի խանութը, և Ապալիբրանձեանի մզկիթին դէմը հայկական գրատունը, Ա. Զարբանէլեանի քով: